ԿԱՐԾԻՔ

Հարություն Արմեն Մաթևոսյանի **«Տալիբանի գործոնն ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ»** Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հետսառըպատերազմյան իրականությունը՝ 1990-2000-ական թվականներ, որը հորջորջվում է նաև միաբևեռ աշխարհակարգ, բնութագրվում է ԱՄՆ անվիճելի առաջատարությամբ և գերիշխանությամբ: 1990-ականներին ԱՄՆ-ն սահմանափակ ռազմական միջամտություն էր իրականացրել մի շարք հակամարտություններում, որոնք իր համար պսակվել էին հաջողությամբ: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը և դրան հաջորդած ներխուժումն Աֆղանստան լուրջ փորձաքար դարձավ ամերիկյան քաղաքականության համար: Աֆղանստան, և երկու տարի անց Իրաք ներխուժումը նախորդ ռազմական միջամտություններից տարբերվում էր նաև այն բանով, որ ներառում էր պետականաշինության, ավելի ճիշտ՝ աֆղանական պետականության և հասարակության վերածնման փորձ: ԱՄՆ-ի աֆղանական կամպանիան ընդհանուր տևեց 20 տարի և ավարտվեց 2021 թ. ամերիկյան զորքի դուրսբերմամբ ու Տալիբանի՝ իշխանության վերագրավումով:

Հարություն Մաթևոսյանի ատենախոսությունը նվիրված է ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ Տալիբանի գործոնին: Այն փորձ է՝ ուսումնասիրելու, ամփոփելու և մեկնաբանելու Տալիբանի նկատմամբ ԱՄՆ վարած քաղաքականությունը: Չնայած այս և առնչվող թեմաների վերաբերյալ արդեն առկա է մեծածավալ գրականություն, սակայն նշված հիմնախնդիրը բավական հեռու է սպառիչ հետազոտված լինելուց, հետևաբար շարունակում է արդիական լինել ուսումնասիրության համար, և գալիք տարիներին ու տասնամյակներին, անշուշտ, լինելու են վերաիմաստավորման փորձեր:

Ատենախոսությունը գրելիս հեղինակն օգտվել է մեծածավալ գրականությունից և սկզբնաղբյուրներից՝ փորձելով հարցն ուսումնասիրել հնարավորինս համակողմանիորեն: Հեղինակը աշխատանքը շարադրել է

հետևյալ հաջորդականությամբ՝ Քլինթոնից մինչև Բայդեն ժամանակաշրջանում, ներառյալ՝ յուրաքանչյուր նախագահի և վարչակազմի գաղափարական մոտեցումներն ու գործնական քաղաքականությունը: Աշխատանքի կառուցվածքը, ժամանակագրական բաժանումները համարժեք են հետազոտության խնդիրներին, աշխատանքի նպատակն ու խնդիրները ձևակերպված են հստակ:

Աշխատանքը կազմված է ներածությունից, չորս գլուխներից և եզրակացությունից: Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է ԱՄՆ-Աֆղանստան պաշտոնական հարաբերությունների սկզբնավորման գործընթացի, Աֆղանստանի էթնոդավանական խճանկարի, Տալիբանի՝ իշխանության գալու հանգամանքների պատմական նկարագրությանը: Ըստ էության, առաջին գլուխը ծառայում է որպես աշխատանքի մուտքային մաս՝ ներկայացնելով նախընթաց պայմանները, որոնք իրենց նշանակալի ազդեցությունն ունեցան ԱՄՆ - Տալիբան հարաբերությունների և ԱՄՆ-ի աֆղանական քաղաքականության վրա հաջորդող տասնամյակների ընթացքում:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխը գաղտնազերծված փաստաթղթերի հիման վրա ամփոփ ներկայացնում է ԱՄՆ - Տալիբան շփումները 1990-ականներին, ալ-Կաիդայի գործունեության խնդիրը, Աֆղանստանում առկա վիճակի ամերիկյան ընկալումները: Գաղտնազերծված փաստաթղթերը վերաբերում են մինչև 2001 թ. շրջանին, սակայն աշխատանքը կշահեր, եթե հեղինակը ներկայացներ, թե որքանով են այդ փաստաթղթերը նպաստել գոյություն ունեցած կամ առավել ընդունված տեսակետների վերահաստատմանը կամ վերանայմանը:

Ատենախոսությունում հեղինակը քննարկում է ԱՄՆ հակառակորդների, տվյալ դեպքում՝ անդրազգային կառույցների դեմ պայքարում ամերիկյան գաղափարական մոտեցումների տարբերությունը: Հ. Մաթևոսյանը նշում է, որ Բուշ կրտսերի վարչակազմը եկավ համոզման, որ արդյունավետ պատասխանը նեոպահպանողական իդեալիզմն է՝ ի հակադրություն նախորդ երկու վարչակազմերի դավանած ռեալիստական ու լիբերալ մոտեցումների: Գաղափարական այս քննարկումների համատեքստում ցանկալի կլիներ, եթե

հեղինակը քննարկեր նաև, թե արդյոք Աֆղանստան ներխուժումն անխուսափելի էր անգամ եթե չլիներ Սեպտեմբերի 11-ը:

Աշխատանքը նկատելիորեն կշահեր, եթե հեղինակը 4-րդ գլխում առանձին ենթագլխով համեմատական վերլուծության ենթարկեր ԱՄՆ արտաքին քաղաքականության աֆղանական և ահաբեկչության դեմ պայքարի բաղադրիչը միմյանց հաջորդող հինգ նախագահների օրոք (Քլինթոն, Բուշ կրտսեր, Օբամա, Թրամփ և Բայդեն): Ճիշտ է, հեղինակն աշխատանքի տարբեր հատվածներում քննարկում է նմանությունները և տարբերությունները, ամփոփ ներկայացնում է եզրակացությունում, սակայն կարելի էր դրանք համակարգված ներկայացնել առանձին ենթագլխով: Մասնավորապես, կարելի էր տարբեր վարչակազմերի աֆղանական քաղաքականությունն անցկացնել համակարգային գործոնների և գաղափարական մոտեցումների ֆիլտրով, ցույց տալ՝ որտեղ են դրանք բախվում կամ ներդաշնակվում: Նման մոտեցումը թույլ կտար վերհանել ԱՄՆ աֆղանական քաղաքականության շարունակականության և փոփոխության դրսևորումները, և ավելի հիմնավոր պնդել (կամ միգուցե հերքել) եզրակացությունում «ռազմավարական անհետևողականություն» որակումը (էջ 134):

- էջ 12 – հեղինակը պնդում է, որ Ջորջ Բուշ կրտսերի վարչակազմի աֆղանական քաղաքականությունը, ինչը նախկինում ներկայացվում էր որպես արտաքին քաղաքականության հեղափոխական շրջադարձ, իրականում եղել է վրիժառության և հետսառըպատերազմյան տարածաշրջանային ռազմավարական օրակարգերի շարունակականության հերթական փուլ: Մինչդեռ աշխատանքում անդրադարձ չկա վրիժառության գործիքակազմին և թե ինչպես է այն դրսևորվել Աֆղանստանում ամերիկյան քաղաքականության մեջ:
- էջ 134 - եզրակացությունում նշվում է՝ *Այս պարագայում, ԱՄՆ-ի քաղաքականությունը նույնական աղերսներ ունի Աֆղանստանում ԽՍՀՄ-ի ծախողված քաղաքականության հետ: Հնարավոր է, որ որպես տեսակետ այն հիմնավորված է, սակայն լավ կլիներ նման եզրակացություն անելու դեպքում տեքստում նույնպես նշված խնդրին անդրադարձ լիներ:*

Ատենախոսությունում որոշ տեղերում առկա են ժամանակագրական, իմաստային, ոճական և լեզվական մի շարք անհարթություններ և խնդիրներ, օրինակ՝

1. էջ 6 – աշխարհի ամենամեծ էվակուացիա (ձևակերպման խնդիր)
2. էջ 21 - որոնք շրջադարձային նշանակություն ունեցան ամերիկացիների նկատմամբ ծայրահեղականների էլ ավելի մարգինալ դրսևորման համար (ձևակերպման խնդիր)
3. էջ 25 - *Խորհրդային Միությունը դարձավ առաջին երկիրը, որը 1921թ. փետրվարի 28-ին պաշտոնապես ճանաչեց Աֆղանստանի անկախությունը* (ժամանակագրական անճշտություն)
4. էջ 26 - Երկրորդ աշխարհամարտից հետո Աֆղանստանի արտաքին քաղաքականությունը ձևավորվում էր իր ունեցած խնդիրների նկատմամբ համընդհանուր շահերի փնտրտուքի ճանապարհով (ձևակերպման խնդիր)
5. էջ 32 - *Այս ժամանակաշրջանում Աֆղանստանում հայտնի էին երեք հիմնական գաղափարախոսական շարժումներ* – երեքի փոխարեն, հավանաբար, երկու պետք է լիներ, քանի որ տեքստում հեղինակը ներկայացնում է երկուսը
6. էջ 49 - *Երկրորդ աշխարհամարտից հետո ավելի քան 50 տարիների ընթացքում ամերիկյան արտաքին քաղաքականությունը հիմնված էր սահմանափակման (containment) և զսպման (deterrence) հայեցակարգերի վրա* – անհրաժեշտ էր մանրամասնել՝ որ հարցերում և որ տարածաշրջաններում:
7. էջ 102 - *2013թ. Ղազնիում տեղի ունեցած ապստամբություններից հետո մինչև Օբամայի առաջին ժամկետի ավարտը Տալիբանը* (ժամանակագրական անհամապատասխանություն) Օբամայի առաջին ժամկետն ավարտվել է 2013 թ. հունվարին, իսկ 2012 թ. նոյեմբերի դրությամբ նա արդեն վերընտրված էր
8. էջ 118 - *Այսինքն, ձևավորվեց մի իրավիճակ, երբ ամեն ինչ հանգեցնում էր ԱՄՆ պատմության մեջ ամենավճռական համաձայնագրի ստորագրմանը* – (անհասկանալի ձևակերպում):

Նշված խնդիրները, սակայն, չեն չեղարկում կամ նսեմացնում ներդրված մեծ ջանքերն այս բարդ թեման համապարփակ ուսումնասիրելու համար: Հարություն Մաթևոսյանն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, պ.գ.թ Մուշեղ Ղահրիյան

19.11.2025 թ.